ՀՏԴ 327.5

Քաղաքագիտություն

Հրայր ՓԱՇԱՅԱՆ
ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության դոցենտ, բ.գ.թ.
E-mail: hrayr.pashayan@mail.ru

Լիանա ԲԱԼԱՅԱՆ
Ստեփանակերտի համար 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ. ՊՐԱՀՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ (2005-2006ԹԹ.) ԵՎ ՌԱՄԲՈՒՅԵՈՒՄ ՉԲԱՑՎԱԾ ՇԱՄՊԱՅՆԸ[1]

2020թ. պատերազմից հետո հայկական շրջանակներում հաճախ կարելի է լսել, այսպես կոչված ոչմիթիզականության դառը հետևանքների մասին: Այս համատեքստում հոդվածում ներկայացվում են Պրահյան գործընթացի շրջանակներում 2005-2006թթ. տեղի ունեցած բանակցությունները: Ցույց է տրվում, որ հակամարտության չկարգավորվածությունը պայմանավորված է ոչ թե ոչմիթիզականության, այլ աղրբեջանական կողմի՝ բանակցություններում ցուցաբերած առավելապաշտական ու ագրեսիվ վարքով: Դրանք հերթական անգամ ապացուցում են, որ բանակցություններում հակամարտող կողմերի դիրքորոշումներն արտացոլում են ոչ թե խնդրի բարոյաիրավական, այլ դրանում ներքաշված երկրների ռազմաքաղաքական ուժերի իրական հարաբերակցությունը:

Բանալի բառեր՝ Ղարաբաղյան հակամարտություն, «Պրահյան գործընթաց», կարգավիճակ, տարածքներ, հանրաքվե, կարգավորման սկզբունքներ:

Г.Пашаян, Л. Балаян

КАРАБАХСКИЙ КОНФЛИКТ. ПРАЖСКИЙ ПРОЦЕСС (2005-2006) И НЕОТКРЫТОЕ ШАМПАНСКОЕ В РАМБУЙЕ

[1] Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՄՍ նախարարության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության՝ №scs20-003 գիտական թեմայի շրջանակներում:

После войны 2020 года в армянских кругах часто можно услышать так называемое о горьких последствиях нежелания отдать пядь земли. В этом контексте в статье представлены переговоры, которые проходили в рамках Пражского процесса в 2005-2006 гг. Показано, что неразрешенный конфликт связан не с нежеланием армянской стороны уступить территорию, а с агрессивным поведением азербайджанской стороны в достижении максимума на переговорах. Они еще раз доказывают, что позиции конфликтующих сторон на переговорах отражают не морально-правовую составляющую вопроса, а реальное соотношение военно-политических сил вовлеченных в него стран.
Ключевые слова: Карабахский конфликт, «Пражский процесс», статус, территории, референдум, принципы урегулирования.

H. Pashayan, L. Balayan

KARABAKH CONFLICT. PRAGUE PROCESS (2005-2006) AND UNDISCOVERED CHAMPAGNE AT RAMBOUILLET

After the war of 2020, one can often hear in Armenian circles about the bitter consequences of the so-called unwillingness to give up an inch of land. In this context, the article presents the negotiations that took place within the framework of the Prague Process in 2005-2006. It is shown that the unresolved conflict is not due to the unwillingness of the Armenian side to cede territory, but to the aggressive behavior of the Azerbaijani side in achieving the maximum in the negotiations. They once again prove that the positions of the conflicting parties in the negotiations reflect not the moral-legal issue of the issue, but the real ratio of the military-political forces of the countries involved in it.
Key words: Karabakh conflict, "Prague process", status, territories, referendum, principles of settlement.

2020թ. պատերազմից հետո հայկական շրջանակներում հաճախ կարելի է լսել այսպես կոչված ոչմիթիզականության դառը հետևանքների մասին: Դրա իմաստը կայանում է նրանում, թե իբր Ադրբեջանին ոչինչ չզիջելու հայկական կողմերի առավելապաշտությունը ի վերջո այսպիսի աղետի հասցրեց մեզ: Ոմանք, նույնիսկ, իրենց պայծառատեսությանը հագուրդ տալով, հայի վերջին խելքով առիթից առիթ հայտարարում են, թե իրենք ժամանակին առաջարկել են «գրավված» տարածքները հանձնել Ադրբեջանին և հանգիստ ապրել հայրենիքի մնացյալ հատվածում, չնայած որև է մեկը նման բան չի երաշխավորել: Կարելի է ենթադրել, որ նման մտածողները կամ իրականում տեղյակ չեն Ադրբեջանի մտադրություններից, կամ չեն ցանկանում իրականությունն ընդունել այնպես, ինչպես որ է: Իհարկե ադրբեջանական կողմն էլ չի հապաղում ցանկացած առիթ օգտագործելու՝ Հայաստանին ագրեսոր ներկայացնելու, սեփական ռազմական հանցագործությունները որպես ազատագրական պայքար ներկայացնելու,

հայկական ֆաշիզմը ոչնչացնելու, իր տարածքներն ազատագրողի կերպար ձևավորելու համար[1]:

Ոչմիթիզականության և «սեփական տարածքների ազատագրման» մասին թեզերը իրականում միայն խնդրի բարոյական կողմն են ներկայացնում: Հակառակ կողմում Ադրբեջանի և նրա կնքահայր Թուրքիայի տարածաշրջանային և աշխարհաքաղաքական շահերն են: Այլապես ոչնչով չես բացատրի 2020թ. աշնանային հաղթարշավից ու սեփական տարածքների ազատագրումից հետո ադրբեջանա-թուրքական կողմի հավակնությունները Հայաստանի Հանրապետության տարածքների և մասնավորապես Սյունիքի նկատմամբ[2]: Հետևաբար, ոչմիթիզականության կամ «սեփական տարածքներն ազատագրելու» Ադրբեջանի սանձազերծած պատերազմի թեզը հարցի բարոյա-իրավական հիմնավորումն է, ինչը հանդիսանում է սեփական շահերն առաջ մղելու (հայերիս դեպքում պարտությունն արդարացնելու) արդյունավետ քաղաքական գործիք:

Ակնհայտ է նաև, որ էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման գործընթացում բարոյականությունը, «միջազգային իրավունքը» կամ «պատմական արդարությունը» երկրորդական դեր են խաղում: Պարզապես Ադրբեջանն ուներ Արցախը զավթելու քաղաքական և ռազմական հնարավորություններ[3]: Դրա մասին են վկայում նաև Հարավային Օսիայի, Աբխազիայի և հատկապես Կոսովոյի հակամարտությունները[4]: Եթե վաղը այդպիսի հնարավորություն ստեղծվի նաև Սյունիքի կամ ՀՀ այլ տարածքների գրավման համար, ապա համոզված ենք, որ Ադրբեջանը որևէ բանի առաջ կանգ չի առնի: Հետևաբար, առաջադրված քաղաքական նպատակներին հասնելու, այդ թվում նաև հակամարտությունների կարգավորման գործընթացում առաջնահերթ նախապայմանը շարունակում է մնալ ռազմաքաղաքական հզորությունը, այլ ոչ թե բարոյապատմական արդարությունը:

---

[1] *Տե՛ս* ***Алиев И.:*** *Без колебаний еще раз разобьем голову армянскому фашизму, https://haqqin.az/news/221264*

[2] *Այս մասին հերթական անգամ 2021թ. սեպտեմբերի 19-ին հայտարարել է Թուրքիայի նախագահը: Լրագրողի այն հարցին, թե ինչ է կարծում Էրդողանը Հայաստանի վարչապետի այն հայտարարությանը, թե թույլ չի տա միջանցքի բացում Ադրբեջանի և Նախիջևանի միջև, վերջինս պատասխանել է.«Այդ միջանցքի բացել-չբացելու հարցը քաղաքական հարց է: Թերևս մտածելու տեղիք է տալիս, երբ մի կողմից՝ նա նման բան է ասում, իսկ մյուս կողմից՝ ուզում է հանդիպել ինձ հետ: Եթե նա ցանկանում է հանդիպել Էրդողանի հետ, ապա այժմ պետք է որոշակի քայլեր ձեռնարկի…»: Տե՛ս՝https://www.aa.com.tr/tr/gundem/cumhurbaskani-erdogan-turkiye-kimsenin-kapi-kulu-degildir/2368670 կամ https://www.civilnet.am/news/633243/ Էրդողանը հայտարարել է, որ Փաշինյանը Վրաստանի վարչապետի միջոցով հանդիպելու առաջարկ է փոխանցել:*

[3] *Տե՛ս* ***Արբահամյան Ա.****, Ինչ հնարավորություններ է օգտագործել Ադրբեջանը, https://www.aravot.am/2021/09/23/1217511/*

[4] ***Shevchuk V.****, Косово – «уникальный» конфликт интересов. https://www.researchgate.net/publication/326426385_Kosovo_-_unikalnyj_konflikt_interesov*

Ադրբեջանի ապակառուցողական ու ագրեսիվ վարքը դրսևորվել է Ղարաբաղյան կարգավորման գրեթե բոլոր փուլերում, որոնցից մեկին՝ Պրահյան գործընթացի 2005-2006թթ. բանակցություններին է նվիրված սույն հոդվածը: Դրանք հերթական անգամ ապացուցում են, որ հակամարտող կողմերի դիրքորոշումներն առավելապես արտացոլում են նրանց ուժերի իրական հարաբերակցությունը այլ ոչ թե խնդրի բարոյաիրավական կողմը[1]: Այսպես՝ 2004թ. վերջին Ղարաբաղյան հակամարտության՝ Պրահյան գործընթացի շրջանակներում առաջացած ճգնաժամը հաղթահարելուց հետո[2] 2005-ի սկզբներին վերսկսվում են բանակցությունները: Արդեն հունվար-ապրիլ ամիսներին Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարները երեք հանդիպում են անցկացնում Պրահայում, Լոնդոնում և Ֆրանկֆուրտում: Հունվարյան բանակցություններից հետո Ռուսաստանի արտգործնախարարությունը հաղորդագրություն է տարածում, որտեղ նշվում է, որ դիվանագետները քննարկում են հակամարտության բոլոր ասպեկտները, այդ թվում այնպիսի ցավոտ հարցեր, ինչպիսիք են զորքերի դուրսբերումը, տարածքների ապառազմականացումը, միջազգային երաշխիքներն ու Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: «Քննարկվող հարցերից մի քանիսի ուղղությամբ որոշակի առաջընթաց է նկատվում տեսակետների մոտեցման ուղղությամբ, երկու կողմերն էլ հաստատում են համատեղ աշխատանքը շարունակելու պատրաստակամությունը»,-նշել էր Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունը[3]: Արտգործնախարարների՝ մեկը մյուսին հաջորդած շփումներից հետո մայիսի 15-ին Վարշավայում հանդիպում են նախագահներ Ի.Ալիևն ու Ռ.Քոչարյանը: Բանակցությունները շարունակվում են մոտ երեք ժամ: Հանդիպման մեկնարկին կես ժամ նախագահների հետ են լինում ԱՄՆ պետքարտուղարության բարձրաստիճան ներկայացուցիչը, Ռուսաստանի ու Ֆրանսիայի արտգործնախարարները: Դիվանագետները նախագահների սեղանին են դնում կարգավորման «շրջանակային համաձայնագիրի» հիմնարար սկզբունքները, որոնց վրա էլ պետք է հենվեր վերջնական համաձայնությունը: Ալիևն ու Քոչարյանը տեսակետներ չեն հայտնում, բայց հանձնարարում են իրենց արտգործնախարարներին շարունակել հանդիպումները[4]:

---

[1] *Տե՛ս **Փաշայան Հ.**, Քաղաքական փաստարկները Ղարաբաղյան հիմնախնդրի փաստաթղթերում և կարգավորման գործընթացում, Ստեփանակերտ, 2016, 256 էջ:*

[2] *Այս իրադարձությունների մասին է հեղինակի՝ Հայաստանի (երրորդ) Հանրապետության և Արցախի Հանրապետության հռչակման 30-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովին (2021թ. սեպտեմբեր) ներկայացրած՝ «Ղարաբաղյան հակամարտություն. Պրահյան գործընթացի մեկնարկը և հիմնական շեշտադրումները ըստ 2004 թվականի ԵԱՀԿ ՄԽ զեկույցի» հոդվածը:*

[3] *МИД России отмечает подвижки в сближении взглядов Еревана и Баку по нагорно-карабахскому урегулированию, https://ria.ru/20050114/1698447.html*

[4] *https://www.azatutyun.am/a/29935114.html*

Մամուլում տեղ գտած հրապարակումներից կարելի է ենթադրել, որ «շրջանակային համաձայնագրի» հիմնարար սկզբունքներում ներառված էին այն կետերը, որոնք քննարկվել են 2004թ. Պրահյան գործընթացի շրջանակներում[1]: Նախագահների հանդիպումից հետո այդ մասին անուղղակիորեն հայտարարել է նաև Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովը[2], չնայած ըստ միջազգային ճգնաժամային խմբի 2005թ. ներկայացրած զեկույցի՝ հակամարտության կարգավորման ռազմավարության մեկ, էջանոց ուրվագիծը Մինսկի խմբի համանախագահները ներկայացրել են նույն թվականի օգոստոսի 27-ին տեղի ունեցած հանդիպմանը[3]: Առաջարկությունների էությունն այն էր, որ Հայաստանը զիջի «գրավյալ» յոթ տարածքներից հինգը: Խաղաղության պայմանագրում նշվում է, որ 10-15 տարի անց Լեռնային Ղարաբաղի տարածքում հանրաքվե անցկացնելու պատճառով որոշվում է դրա վերջնական կարգավիճակը, և այս ընթացքում Լաչինը և Քելբաջարը մնում են հայկական ուժերի վերահսկողության տակ: Ադրբեջանցի փախստականները վերադառնում են Ղարաբաղ, իսկ հակամարտության գոտում խաղաղապահ զորքեր են տեղակայվում[4]: Արտգործնախարարական հերթական հանդիպումը տեղի ունեցավ 2005թ. հունիսի 17-ին, Փարիզում: Առաջարկված տարբերակների ձախողումից հետո միջնորդները շարունակում են փորձերը նոր ուղղությամբ: Համանախագահները փորձում էին կողմերի համաձայնությունը ստանալ կարգավորման հիմնարար սկզբունքների շուրջ, որոնց վրա հետո պետք է սկսվեին բանակցությունները հաշտության վերջնական համաձայնագրի համար՝ զուգահեռ հասարակություններին նախապատրաստելով փոխզիջման:

Այս հանդիպումից հետո խոսելով բանակցությունների մասին Ադրբեջանի արտգործնախարարը պարզաբանեց, որ կողմերը առանձին են ընտրում հարցերը և որոշելով մեկը՝ անցնում են մյուսին՝ «ասես մարգարիտները ամրացնելով մետաքսե թելին»: Երկու կողմերն այժմ եզրակացության ուղիներ են փնտրում այն հարցերի վերաբերյալ համաձայնության գալու համար, թե ինչպես է որոշվելու կարգավիճակը, բայց բուն որոշման ընդունումը հետաձգելով մինչ այլ ժամանակ, մինչև այլ ասպեկտների իրագործում[5]: 2005թ. հուլիսի կեսերին, երբ համանախագահները հերթական անգամ ժամանել էին տարածաշրջան, լրատվամիջոցներում եղավ արտահոսք, ըստ որի՝ հայկական

---

[1] *Ավելի ուշ անուղղակիորեն հաստատել է նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահը՝ Մեթյու Բրայզան. «Նախագահներին ներկայացվել է շրջանակային համաձայնագիր», https://www.azatutyun.am/a/1582665.html*

[2] *В Варшаве состоялась встреча президентов Армении и Азербайджана Роберта Кочаряна и Ильхама Алиева. https://armenpress.am/rus/news/544818/rus/*

[3] *«Нагорный Карабах: план установления мира», Доклад No 167, Европа, 11 октября, 2005 г., ст. 2.*

[4] *https://studbooks.net/21165/istoriya/prazhskiy_protsess*

[5] *«Нагорный Карабах: план установления мира», Доклад No 167, Европа, 11 октября, 2005 г., ст. 13.*

կողմը համաձայն է Ադրբեջանին վերադարձնել ԼՂ-ն շրջապատող տարածքները, ինչի դիմաց Բաքուն կհամաձայնի հետագայում ԼՂ կարգավիճակի հարցով հանրաքվե անցկացնելուն[1]: Մասնավորապես՝ Ղարաբաղյան հակամարտության լուծման հիմնական առանցքը, ըստ մամուլի, 10-15 տարվա ժամկետում անցկացվելիք ժողովրդական հանրաքվեն է լինելու. ժողովրդին հնարավորություն է տրվելու որոշել Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակը[2]:

Պետք է ասել, որ հանրաքվեի տարբերակը շրջանառության մեջ էր դրվել դեռևս ամիսներ առաջ, սակայն այն ժամանակ խոսվում էր Ադրբեջանում և Ղարաբաղում հանրաքվե անցկացնելու մասին, իսկ այսօր խոսքը միայն Լեռնային Ղարաբաղում անցկացվելիք հանրաքվեի մասին է: Ընդ որում, մինչև դրա անցկացումը Ադրբեջանը փաստորեն ճանաչում է Լեռնային Ղարաբաղի այսօրվա դե ֆակտո կարգավիճակը, այսինքն՝ ինքնորոշման իրավունքը: Ղարաբաղի վերահսկողության տակ է մնում Լաչինը: Ինչ վերաբերում է հայկական ուժերի վերահսկողության տակ գտնվող ադրբեջանական տարածքներին, ապա նախատեսվում էր հինգ տարածք վերադարձնել Ադրբեջանին՝ Ղարաբաղում հանրաքվե անցկացնելու հնարավորության դիմաց: Հանրաքվեում ղարաբաղցիները որոշելու են իրենց կարգավիճակը՝ միանալ Հայաստանին, մնալ Ադրբեջանի կազմում կամ դառնալ անկախ[3]: Հանդիպումների ընթացքում խոսվել է նաև անվտանգության երաշխիքների մասին: Թե՛ հայ, թե՛ ադրբեջանցի դիվանագետները, ինչպես նաև միջազգային միջնորդները հայտնել են, որ հակամարտության գոտում տեղակայվելու են միջազգային խաղաղապահ ուժեր: Չէր նշվում, սակայն, թե կոնկրետ ինչ ուժեր: Ադրբեջանը միշտ դեմ է եղել, որ դրանց կազմում լինեն ռուս զինվորներ, իսկ Հայաստանը, իր հերթին, դեմ էր թուրքական ուժերի տեղակայմանը: Դիվանագիտական աղբյուրների հաղորդած տեղեկություններով, խաղաղապահների հարցը նույնպես գրեթե լուծվել է. այն է՝ միջազգային խաղաղապահ ուժեր տրամադրող երկրները չպետք է լինեն Մինսկի խմբի անդամ: Սրանով բավարարվում են թե՛ Հայաստանի և թե՛ Ադրբեջանի պահանջները, քանի որ և՛ Թուրքիան, և՛ Ռուսաստանը անդամակցում են ԵԱՀԿ Մինսկի խմբին[4]:

Ամենաթեժ բանավեճը սակայն ծավալվեց կողմերի ձեռնարկելիք գործողությունների համաձայնեցման շուրջ: Պայմանավորվածություն կար, որ Լեռնային Ղարաբաղից դեպի արևելք ու հարավ գտնվող ու հայերի կողմից

---

[1] *Տե՛ս **Հակոբյան Թ.**, Կանաչ ու սև. Արցախյան օրագիր, Եր., 2011, էջ 389:*

[2] *Ղարաբաղյան հակամարտությունը կարող է լուծվել արդեն այս տարի, https://www.azatutyun.am/a/1577659.html*

[3] *Ղարաբաղյան հակամարտությունը կարող է լուծվել արդեն այս տարի, https://www.azatutyun.am/a/1577659.html*

[4] *Նույն տեղում*

վերահսկվող հինգ ադրբեջանական շրջանները պիտի վերադարձվեին հնարավորինս շուտ, այսինքն՝ երբ դա գործնականում հնարավոր դառնար: Սակայն ադրբեջանցիները, պնդում էին, որ Հայաստանի ու Ղարաբաղի միջև ընկած երկու արևմտյան տարածքները՝ Քելբաջարի լեռնային շրջանը և Լաչինի «ոչ միջանցքային» հատվածը, նույնպես ամբողջությամբ ադրբեջանական տարածքներ են եղել մինչև հակամարտությունը, ուստի պետք է վերադարձվեն նույն ժամանակացույցի շրջանակներում: Ավելին՝ ըստ Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովի՝ «Հանրաքվե անցկացնելու մասին հայտարարությունները ոչ այլ ինչ են, քան շահարկումներ», Պրագայում ընթացող բանակցությունների հիմնական թեման օկուպացված 7 շրջանների ազատագրումը և Ադրբեջանի տարածքային ամբողջականության վերականգնումն է[1]: Հայկական կողմը չէր համաձայնում առանց փոխարենը ոչինչ ստանալու վերադարձնել այդ տարածքները՝ պնդելով, թե դրանք Լեռնային Ղարաբաղի անվտանգության առումով ռազմավարական տարածքներ են: Ուստի նրանք հանդես եկան պատասխան առաջարկով, որը 2006 թվականից դրվեց խաղաղ կարգավորման ծրագրի առանցքում. Լեռնային Ղարաբաղին տրվում է «միջանկյալ կարգավիճակ», իսկ վերջնական կարգավիճակի որոշման հարցը հետաձգվում է[2]:

Պրահյան գործընթացի հիմնական գաղափարներից մեկն էլ Լեռնային Ղարաբաղի ապաշրջափակումն էր: Ըստ այդմ՝ Ղարաբաղը բացվում էր արտաքին աշխարհի համար, ու նրան շնորհվում են միջազգային կազմակերպությունների աշխատանքներին մասնակցելու (օրինակ՝ դիտորդի կարգավիճակ ԵԱՀԿ-ում) որոշակի իրավունքներ, բայց ոչ լիակատար միջազգային սուվերենություն[3]: «Փուլափաթեթային ձևաչափի» լուծման այս տարբերակը, ըստ մամուլում հրապարակված տեղեկատվության, ներառում է նաև հայ-թուրքական հարաբերությունների, մասնավորապես՝ հայ-թուրքական սահմանի բացման հարցը. համաձայնագրի ստորագրման պահից Թուրքիան վերաբացում է իր սահմանը Հայաստանի հետ, իսկ Ադրբեջանը ապաշրջափակում է հաղորդակցության ուղիները[4]:

Մամուլում տարածված տեղեկատվությունը կտրված չէր իրականությունից, ինչի մասին է փաստում Մինսկի խմբի համանախագահների՝ Հայաստանում ու Ադրբեջանում հուլիսի կատարած «զգալի առաջընթացի» մասին հայտարարությունները: «Կողմերը եկել-հասել են այնպիսի սահմանի, որ մենք արդեն աշխատում ենք ձևակերպումների վրա», -Երևանում հայտարարում է

---

[1] *Տե՛ս* ***Араз Азимов****: «Высказывания о проведении референдума ничего, кроме спекуляции не азначают», 13.01.05. ИА «АПА», Карабах обсуждается, Баку, 2006, ст. 207-208.*

[2] *Տե՛ս* ***Թոմաս դե Վաալ,*** *նշվ. աշխ, էջ 397*

[3] *Նույն տեղում*

[4] *Տե՛ս Ղարաբաղյան հակամարտությունը կարող է լուծվել արդեն այս տարի, https://www.azatutyun.am/a/1577659.html*

միջնորդական խմբի ռուս համանախագահ Յուրի Մերզլյակովը՝ վերահաստատելով, - միջնորդներն աշխատում են ձևակերպել «ապագա կարգավորման հիմնական սկզբունքները»[1]:

2005թ. օգոստոսի 27-ին Կազանում, ԱՊՀ ղեկավարների գագաթնաժողովի շրջանակներում տեղի է ունենում նախագահների՝ *Քոչարյան-Ալիև* հերթական հանդիպում: Հանդիպումից առաջ միջնորդները հայտարարել էին, որ պատրաստվում են նախագահների քննարկմանը ներկայացնել արտգործնախարարների հանդիպումների արդյունքում ստեղծված փաստաթուղթ՝ կարգավորման հիմնարար սկզբունքների մասին: «Բանակցային գործընթացը խորացել է՝ ինչպես երբեք չէր եղել անցյալում, և հասել շատ լավ մակարդակի», -հայտարարում է ամերիկացի համանախագահ Ս.Մաննը[2]: Այն, որ իրոք Պրահյան գործընթացի շրջանակներում զգալի աշխատանք է տարվել հակամարտության կարգավորման ուղղությամբ, վկայում է նույն թվականի դեկտեմբերին ԵԱՀԿ բարձր պլանավորման խմբի տարածաշրջան այցելությունը, որի ընթացքում քննարկվում է խաղաղապահների տեղակայման հնարավորությունը: Ըստ Հայաստանի արտգործնախարար Վ. Օսկանյանի՝ «ԵԱՀԿ ներկայացուցիչները որոշել են սկսել այդ աշխատանքը՝ խուսափելու հնարավոր իրավիճակից, երբ կողմերը համաձայնության կգան հիմնախնդրի կարգավորման շուրջ, իսկ խաղաղապահ օպերացիան նախապատրաստված չլինի»[3]: Ավելի ուշ խաղաղապահների մասին խոսել է նաև ԱՀ ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովը՝ շեշտելով, որ տվյալ հարցը հանդիսանում է Ղարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացի 9 տարրերից մեկը[4]: Ռուս համանախագահն էլ նշել է, թե նախատեսվում է 10.000-ոց խաղաղապահական ուժ տեղակայել, որը չի լինի Թուրքիայից, Ռուսաստանից, Միացյալ Նահանգներից կամ Ֆրանսիայից՝ խմբի չեզոքությունը պահպանելու համար[5]: Լավատեսական հայտարարություն է հնչում նաև Լյուբլյանայում՝ 2005թ. դեկտեմբերին ԵԱՀԿ արտգործնախարարների գագաթնաժողովում: Հանդիպման ավարտին ընդունված փաստաթուղթը ողջունում է հակամարտության կարգավորման շուրջ նկատվող առաջընթացը և քաջալերում Հայաստանի ու Ադրբեջանի նախագահներին օգտագործել բանակցային գործընթացում ի հայտ եկած «հուսադրիչ հնարավորությունը»: «Մենք գոհունակությամբ նշում ենք 2005 թվականին Պրահայի գործընթացի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի շուրջ

---

[1] *Տե՛ս https://www.azatutyun.am/a/29935114.html*

[2] ***Манн С.,*** *Процесс урегулирования карабахского конфликта "достиг высокого уровня", https://www.trend.az/azerbaijan/politics/764947.html*

[3] *https://www.azatutyun.am/a/29935114.html*

[4] *Размещение миротворческих сил в зоне армяно-азербайджанского конфликта является один из 9 элементов, обсуждаемх в перегаворном процессе, ИА «Туран», 22.12.05.*

[5] *https://www.azatutyun.am/a/29935114.html*

բանակցությունների առաջընթացը, և, մասնավորապես, Հայաստանի և Ադրբեջանի նախագահների երկու հանդիպումները Վարշավայում և Կազանում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո: Մենք հավատում ենք, որ կողմերն այժմ պատրաստ են բանակցություններից անցնել որոշումների կայացման, և որ բոլորը կարող են լուրջ օգուտներ ստանալ՝ գալիք տարում նշանակալի ձեռքբերումների հասնելու համար»,- մասնավորապես նշված է փաստաթղթում[1]:

Այս ամենի շնորհիվ մեծացավ գործընթացում երկու նախագահների ուղղակի ներգրավվածությունը, և նրանք հերթական անգամ հանդիպեցին դեմ առ դեմ: 2006 թվականի փետրվարին միջնորդները փորձեցին ավարտին հասցնել շրջանակային փաստաթղթի շուրջ համաձայնությունը Փարիզի մերձակայքում գտնվող Ռամբույե ամրոցում կայանալիք հանդիպմանը: Ակնկալիքներն այնքան մեծ էին, որ ռուսներն ու ամերիկացիները իրենց պատվիրակություններում ընդգրկել էին նաև իրավաբանների՝ խաղաղ համաձայնագրի նախագծի վրա աշխատանքը սկսելու համար[2]: Հանդիպումից առաջ ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը հեռախոսազրույց էր ունեցել Ադրբեջանի նախագահի հետ[3], Ֆրանսիայի առաջնորդ Ժակ Շիրակն էլ երկու նախագահներին ընդունել էր Ելիսեյան պալատում՝կոչ անելով գտնել հաշտեցման եզրեր[4]: Բանավեճի հիմնական կետերը Քելբաջարից ու Լաչինից զորքերի դուրսբերման ժամանակացույցն էին ու հանրաքվեի բնույթը: Պրահյան գործընթացի շրջանակներում հայկական կողմը համաձայնություն էր տվել ղարաբաղյան ուժերի դուրսբերմանը հինգ շրջաններից, բացառությամբ Լաչինի և Քելբաջարի: Հատկապես վերջինս կարևորագույն ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի և ԼՂ-ի համար, քանի որ այդ լեռնային շրջանի վերադարձը նշանակում է շփման գծի երկարում շուրջ 200 կիլոմետրով: Հայկական կողմը համաձայն էր Քելբաջարից հեռանալ, երբ ԼՂ-ում տեղի ունենա կարգավիճակի հանրաքվե: Ու քանի որ շատերի համար պարզ է, որ հանրաքվեի գաղափարը փաստաթուղթ է մտցվել կողմերի երեսը փրկելու նպատակով, Բաքուն կտրականապես դեմ էր Քելբաջարի և հանրաքվեի շաղկապմանը: Ադրբեջանը պնդում էր, որ Քելբաջարից հայկական ուժերի դուրսբերումը չկապվի հանրաքվեի հետ, բայց մյուս կողմից՝ համաձայն էր այդ շրջանը հետ ստանալ ավելի ուշ՝ երեք, հինգ կամ տասը տարի հետո, այսինքն՝ որևէ հստակ ժամկետում, բայց ոչ երբեք հանրաքվեից հետո:

---

[1] *STATEMENT ON THE CONFLICT DEALT WITH BY THE OSCE MINSK GROUP (MC.DOC/5/05 of 6 December 2005) https://www.osce.org/files/f/documents/6/5/18778.pdf*

[2] *Տե՛ս **Թոմաս դե Վաալ**, նույն տեղում, էջ 397*

[3] *Տե՛ս **Исмайлов Ф.**, Алиев и Кочарян обсудят Карабах в Париже http://news.bbc.co.uk/hi/russian/news/newsid_4699000/4699474.stm*

[4] *Տե՛ս Жак Ширак вмешался в конфликт вокруг Нагорного Карабаха, https://lenta.ru/news/2006/02/11/talks/*

Բարձր մակարդակով հանդիպումները սովորաբար անցնում էին հետևյալ կերպ. համանախագահները նախագահներին ներկայացնում էին իրենց եզրափակիչ փաստարկները, իսկ հետո հեռանում՝ թողներով, որ երկու նախագահները մի շիշ վիսկիով սեղանի շուրջը հանգեն վերջնական որոշման: Ալիևն ու Քոչարյանը բավականաչափ մտերիմ էին՝ ռուսերենով շփվելիս միմյանց «դու»-ով դիմելու համար, բայց կասկածներ կային, որ միմյանց վստահում էին ընդամենը այնքանով, որ պայմանավորվեն «ոչ» ասել վերջնական համաձայնությանը[1]: Ինչպես ձևակերպել է բանակցություններում ընդգրկված մի պաշտոնյա, «շատերը կարծում են, որ երբ համանախագահներն իրենց հետևից փակում են դուռն ու դեմ առ դեմ թողնում երկու նախագահներին, նրանք պայմանավորվում են համաձայնության չգալ»: Ռամբույեում ֆրանսիացի տանտերերը լավատեսորեն շամպայն էին նախապատրաստել, բայց այն այդպես էլ մնաց սառնարանում: Համաձայնություն չեղավ: Միջնորդների փոխանցմամբ՝ Քոչարյանը ավելի բացահայտորեն է մերժել քննարկվող մեկ, էջանոց փաստաթուղթը[2]: ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Սթիվեն Մաննը, խոսելով Ռամբույեում տեղի ունեցած բանակցությունների մասին, նշեց, որ Ռամբույեում Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև տեղի են ունեցել ինտենսիվ բանակցություններ, քննարկվել է ղարաբաղյան հակամարտության հարցերի ողջ շրջանակը, երկու նախագահների միջև լավ անձնական մթնոլորտ է ստեղծվել, սակայն համաձայնություն ձեռք չի բերվել: «Քննարկումների արդյունքում կողմերի դիրքորոշումներում շոշափելի փոփոխություն տեղի չունեցավ: Հիմա համանախագահները պետք է գնահատեն բանակցությունները: Մենք պետք է տեսնենք, թե որ ուղղությամբ պետք է շարժվենք այստեղից»[3]:

Չորս ամիս անց նախագահները կրկին հանդիպեցին՝ Բուխարեստում: Եվ կրկին ճեղքում չեղավ, քանի որ ինչպես հաղորդվեց, երկուսն էլ վերապահումներ ունեին[4]:

Ըստ փորձագետների՝ Քիվեսթից հետո Ռամբույեում տեղի ունեցած Հայաստանի և Ադրբեջանի նախագահների բանակցությունները բանակցային գործընթացի ողջ պատմության ընթացքում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ամենալուրջ փորձն են եղել: Կողմերի համար հիմնական

---

[1] *Տե՛ս **Թոմաս դե Վաալ**, նույն տեղում, էջ 398*

[2] *Ըստ Թոմաս դե Վաալի՝ Փարիզում եղած պաշտոնյաներից առնվազն մեկը հաստատում է Քոչարյանի կոշտ դիրքորոշումը, թեև Երևանում Միացյալ Նահանգների դեսպանի հետ զրույցում Քոչարյանը Ալիևին մեղադրել է խուսանավելու մեջ՝ ասելով. «Նա անգամ մինչև վերջ չգիտեր, թե ինչ է ուզում այդ հարցում», և պատրաստ չէր խելամիտ զիջումների: Մեջբերումն ըստ Թ. դե Վաալի, էջ 398:*

[3] *Стивен Манн о переговорах в Рамбуйе: "результатов нет, соглашения не достигнуто", https://regnum.ru/news/polit/589374.html*

[4] ***Թոմաս դե Վաալ**, նույն տեղում, էջ 398:*

խնդիրը կապված է եղել Քարվաճառի վերադարձի և Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցերի հետ: Հայկական կողմն առաջարկում էր Քելբաջարի շրջանը հանձնել ամենավերջում, երբ ադրբեջանցիները համաձայնվեն հանրաքվե անցկացնել: Սակայն ադրբեջանցիները դեմ են այս առաջարկին: Եվ այստեղ էր, որ հնարավոր չէր որևէ առաջընթաց արձանագրել կողմերի դիրքորոշումներում[1]: 2006թ. Սեպտեմբերին, մեկնաբանելով Լեռնային Ղարաբաղում հանրաքվե անցկացնելու միջնորդների առաջարկը, Մեթյու Բրայզան նշել էր, որ «հիմնական սկզբունքները պարունակող փաստաթղթում օգտագործված է հետևյալ տերմինաբանությունը. «հանրաքվե/ բնակչության քվեարկություն»: «Ադրբեջանն ասում է, որ ի նկատի ունի ոչ թե հանրաքվե, այլ բնակչության քվեարկություն՝ վկայակոչելով իր Սահմանադրությունը, որտեղ ասվում է, որ հանրաքվեին պետք է մասնակցեն երկրի բոլոր քաղաքացիները: Իմ կարծիքով, հայկական կողմին չի գոհացնում այդ տարբերակը, որի դեպքում քվեարկությանը կմասնակցի Ադրբեջանի ողջ բնակչությունը: Այսպիսով, մենք պետք է գտնենք խելամիտ ուղի և այնպես մշակենք քվեարկության գործընթացը, որպեսզի այն համապատասխանի ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի շահերին», - ասել էր ամերիկացի դիվանագետը[2]:

2006 թ. հունիսի 22-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները ելույթ ունեցան Վիեննայում՝ ԵԱՀԿ Մշտական խորհրդում՝ ներկայացնելով հակամարտության կարգավորման հիմնական սկզբունքները: Ընդ որում, համանախագահները նշեցին, որ «սպառել են իրենց երևակայությունն այդ սկզբունքները ճանաչելու, ձևակերպելու և վերջնական տեսքի բերելու գործում»[3]: Այդուհանդերձ, 2007 թ. նոյեմբերի 29-ին Մադրիդում ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդի շրջանակներում Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներին պաշտոնապես հանձնվեց հետագայում կարգավորման հիմնարար սկզբունքների տեքստը:

Վերլուծելով 2005-2006թթ. Ղարաբաղյան հակամարտության Պրահյան գործընթացի շրջանակներում տեղի ունեցած բանակցությունները, կարելի է եզրակացնել, որ քննարկվող հիմնական հարցերը վերաբերում էին հետևյալին.

1. Պրահյան գործընթացի շրջանակներում նախատեսվում էր Ադրբեջանին հանձնել հայկական կողմի վերահսկողության տակ գտնվող հինգ շրջանները: Լաչինի և Քելբաջարի շրջաններն Ադրբեջանին հանձնելու հարցը նույնպես օրակարգում էր: Սակայն եթե առաջինի դեպքում Հայաստանի իշխանությունները պատրաստակամ էին առանց նախապայմանների հանձնել

---

[1] *Переговоры в Рамбуйе были самой серьезной после Ки-Уэста попыткой решить карабахский вопрос, https://www.panarmenian.net/rus/world/news/16352/*

[2] *5/10/15. Բրայզայի «պատուհանը», Ֆյուլեի «ավելի լուրջ» դերը, Ալիևի կշտամբանքը, https://mediamax.am/am/news/5-10-15/44629/*

[3] *Արցախի Հանրապետության ԱԳՆ պաշտոնական կայք, http://www.nkr.am/hy/osce-minsk-process*

հինգ շրջանները, ապա այս դեպքում. հաշվի առնելով նրանց անվտանգային կարևոր դերակատարությունը, վերջիններիս հանձնումը կապում էին Արցախում նախատեսվող հանրաքվեի հետ: Բաքուն կտրականապես դեմ էր Քելբաջարի և հանրաքվեի շաղկապմանը: Ադրբեջանը պնդում էր, որ Քելբաջարից հայկական ուժերի դուրսբերումը չկապվի հանրաքվեի հետ, բայց մյուս կողմից՝ համաձայն էր այդ շրջանը հետ ստանալ ավելի ուշ՝ երեք, հինգ կամ տասը տարի հետո, այսինքն՝ որևէ հստակ ժամկետում, բայց ոչ երբեք հանրաքվեից հետո:

2. Տարբեր էին հայկական և ադրբեջանական կողմերի՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշման նպատակով հանրաքվեի անցկացման մասին պատկերացումները: Դրա մասին են խոսում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի ճշգրտման նպատակով նախատեսվելիք հանրաքվեի անցկացման երկու տարբեր ընկալումները՝ իրենց միանշանակ հետևանքներով: Ադրբեջանական կողմը *հանրաքվե* ասելով վկայակոչում է իր Սահմանադրությունը, ըստ որի՝ հանրաքվեին պետք է մասնակցեն երկրի բոլոր քաղաքացիները: Այս դեպքում ակնհայտ է, որ Ադրբեջանը փորձում է ստանալ ոչ միայն յոթ շրջանները, այլև նախկին ԼՂԻՄ տարածքը, ինչպիսին որ հասկացվում էր *Լեռնային Ղարաբաղ* ասելով: Բնականաբար հայկական կողմին չի գոհացնում այդ տարբերակը, և *հանրաքվե* ասելով նկատի է առնվում այսպես ասած բուն Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության շրջանակներում իրականացվող քվեարկությունը:

3. Պրահյան գործընթացի շրջանակներում տեղի ունեցած բանակցությունների դժվարին խնդիրներից մեկն էլ կապված էր տարածաշրջանում խաղաղապահ ուժերի տեղակայման հետ: Ադրբեջանական կողմը դեմ էր տարածաշրջանում ռուսական խաղաղապահների տեղակայմանը, իսկ Հայաստանը՝ թուրքական. որոշվել էր, որ խաղաղապահ ուժեր տրամադրող երկրները չպետք է լինեն Մինսկի խմբի անդամ: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ չհանդիսացող պետությունները, մասնավորապես Սկանդինավյան պետությունները, որոնց մասին տեղեկություններ էին շրջանառվում, չունեին այդպիսի հնարավորություն կամ ցանկություն, խաղաղապահների հարցը նույնպես խրթին էր դառնում:

4. Այդուհանդերձ, հակամարտության կարգավորման հիմնական խոչընդոտը կապված էր ադրբեջանական իշխանությունների առավելապաշտական ձգտումների հետ, ովքեր հիմնախնդրի կարգավորումը տեսնում էին միայն սեփական պատկերացմամբ տարածքային ամբողջականության շրջանակներում: Դա է պատճառը, որ հայկական կողմի զիջումներին զուգընթաց նրանք նոր պահանջներ էին առաջ քաշում՝ փորձելով ամեն կերպ խուսափել հանրաքվեի միջոցով Արցախի վերջնական կարգավիճակի որոշման բանակցային պարտավորությունից: Բանակցություններում ցանկալի

արդյունքի չհասնելու դեպքում, որով նրանք հասկանում էին ներառյալ նախկին ԼՂԻՄ-ի Ադրբեջանին փոխանցումը, երկրի քաղաքական[1] ու ռազմական պատասխանատուները պարբերաբար հանդես էին գալիս նաև խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու դիրքերից[2]: Բնականաբար, հակառակորդ կողմի այսպիսի դիրքորոշման պարագայում, որը չի փոխվել նաև ներկայումս, անիմաստ է և տեղին չէ խոսել հայկական միջավայրում շրջանառվող ոչմիթիզականության, առավել ևս նրա սխալականության մասին:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ա.Փ. Ենգոյանը:

---

[1] *Նախագահ Իլհամ Ալիևը հնչեցրել է բազմաթիվ սպառնալիքներ՝ ուժի միջոցով լուծելու Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը:*

[2] *Տե՛ս, օրինակ, 2006թ. Ռամբուեյի բանակցությունների նախօրեին՝ հունվարի 24-ին երկրի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևի հայտարարությունը՝ Азербайджан готов силой вернуть Нагорный Карабах, https://lenta.ru/news/2006/01/24/war/*